



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ապրիլի 2021 թվական թիվ 31-Ն

գյուղ Ազատան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 08-004-0733-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԶՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**







Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի գյուղական համայնքի ավագանին՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի սեփականությունը հանդիսացող 1,00168 հեկտար մակերեսով ջրային նպատակային նշանակության, 08-004-0733-0013 կադաստրային ծածկագրով հողամասը գյուղատնտեսական ջրային կենդանիներ բազմացնելու նպատակով, մրցութային կարգով տրամադրել վարձակալության:
2. Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել 60000 դրամ:
3. Մրցութային մեկ քայլը սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով:
4. Հողամասը վարձակալությամբ օգտագործման տրամադրել քսանհինգ տարի ժամանակով՝ մինչև 2046 թվականի հուլիսի 1-ը:
5. Հողամասի վարձակալության պայմանագրում սահմանել ջրօգտագործման հետևյալ սահմանափակումները՝
  - 1) օգտագործելի ջրային ռեսուրսից ավել ջրային ռեսուրսից ջուր վերցնելը, կամ այլ եղանակով նվազեցնելը,
  - 2) ջրի քանակի կուտակումը, որը կհանգեցնի պատվարի ողողմանը կամ փլուզմանը,
  - 3) ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը,

- 4) ջրային ռեսուրսի աղտոտումը, ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետումը, վնասակար նյութերի կուտակումն այնպիսի եղանակով, որը կարող է վնասակար ազդեցություն ունենալ ջրային ռեսուրսի վրա,
- 5) ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը, բացառությամբ տիղմակալած հատվածների մաքրման աշխատանքների:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

	Կողմ ( 6 )	Դեմ ( 0 )	Ձեռնպահ ( 0 )
Գ. Աբրահամյան		_____	_____
Պ. Ենգոյան		_____	_____
Կ. Ենգոյան		_____	_____
Ա. Իկիլիկյան		_____	_____
Վ. Մկրտչյան		_____	_____
Հ. Պողոսյան		_____	_____

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
 Ազատանի համայնքի ղեկավար  
 23 ապրիլի 2021 թվական  
 գյուղ Ազատան



 Վ. Իկիլիկյան